

# Հ Ա Ն Դ Է Ս Ա Շ Խ Ա Ր Հ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

## ԵՓՐԱՏԱՅ ԳԵՏԱՀՈՎՏԻՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՆ՝

Եփրատայ գետահովիտն, մարդկային գործունէութեան առաջին կենդանոններէն մէկն, երկրիս ամենէն բարեբեր աշխարհներէն մէկն է: Հիւսիսային լայնութեան 30 և 40 աստիճանաց միջոց ըլլալով՝ իր դաշտերն արևադարձային գաւառաց ամեն բարեմասնութիւններն ալ ունին, մինչդեռ Տիգրիսի ձախակողմն եղած բարձրաւանդակքն՝ բարեխառն կլիմայից շնորհքը կը վայլեն: Ներկայիս՝ կառավարութեան անհոգութիւնն և բնակաց երկարժամանակեայ թմրութիւնն՝ երկրին բնական հարստութիւնը նուազեցուցեր են. սակայն հողն միշտ նոյն է. և եթէ լաւ վարչութիւն մ'ըլլայ ու մեծ տնտեսական ձեռնարկութիւն մը, տեղւոյն ծածկուած շահաբեր աղբիւրքն զարմանալի կերպով կրնան յորգել: Այն երջանիկ դիպուածն՝ որ քաղաքականութեան ընթացից մէջ պիտի ձգէ Նիւուէի և Բաբելոնի հին թագաւորութիւնները, անշուշտ պիտի ըլլայ Հընդկա-Եւրոպական երկակիւնը ընդ մէջ Միջերկրական և Պարսկային Մովուց, կամ գոնէ Եփրատայ և Տիգրիսի բացումն առ շոգեմուղ նաւարկութիւն: Առջի խնդրոյն վրայք շատ խօսուած է. երկրորդին վրայք կ'արժէ քիչ մը

խօսիլ, մանաւանդ որ կը յուսացուի շուտով յաջողիլ, և վաճառականութեան մեծ շարժում մը պատճառել:

Շաղէլ-Արապի (միացեալ Եփրատայ և Տիգրիսի) գետահովիտն՝ որ կը հասնի մինչև 'ի Պարսկային ծոց, Ասիական Թուրքիոյ բոլոր հարաւային արևելեան մասը կը բովանդակէ, հանդերձ Պարսկաստանի արևմտեան մասամբ. իսկ վերին կողմէն կը գրաւէ նաև մաս մը Հայաստանի: Ի միջակողմն կայ էլ ձեզիրէ կամ Միջագետք, ընդ մէջ երկու գետերուն, Մուսուլ մայրաքաղաքաւ. Տիգրիսէն անդին՝ Քիւրտիստան, կամ Տիարպէքիւրի կողմնակալութիւնն. 'ի հարաւակողմն՝ Իրաք Արապի կամ Բաբելոն, որոյ մայրաքաղաքն է Պաղատա, մեծ շահաստանն բոլոր գետահովիտն:

Այս երեք բաժնէն արևմտագոյնն և հիւսիսայինն՝ Քիւրտիստան կամ Տիարպէքիւր՝ երկիւրտ երկիր մ'է, բայց Միջագետաց դաշտերէն մաս մ'ալ կը գրաւէ: Գլխաւոր բերքն է բամբակ, գխտոր, ասր, մարթեղէնք և խէժ: Ասրն կու գայ այն դաշտերէն ուր շուրճակ Արաքը կը թափառին, ընդ մէջ Մէրսինի և Բուսէիլադայ, կամ Քիւրտիստանի լեռներէն. առջինն՝ որ յատկապէս անազ կ'անուանի, աւելի մաքուր է, վասն զի անասունները խուզելէն առաջ կը լուան, և յարգի է քան

1 Գրողն է Փրանկ մը յաթն 1876:

գլխարկ քան Մօսկայ : Դէպ 'ի Մօսկ կու գան բեռնարարձ լաստք, որոց փայտեղէն կազմածն՝ Պաղտատայ տանց շինութեան կը գործածուի :

Գանք յիրագ Արապի . գետոց հոսանքն և Ասորուց անապատին վտանգն ներն՝ դէպ 'ի հօս կիջեցընեն Տիարպէքի և Միջագետաց բուրդն ու կաշին . եւրոպական վաճառք ալ՝ ճամբուն ապահովութեանն համար՝ ծովով կու գան և վաճառքին կը թափեն 'ի Պաղտատ, ուսկից կը սփռուի բոլոր գետա, հովտին մէջ : Ենչի իսկ Պաղտատ ալ կը մատակարարէ մեծ մաս մը վաճառուց . 3 կամ 4000 տակառ արմաւ պտուղ, 1500 տակառ ասոր, որոյ ամենէն բարակ տեսակն կու գայ Արաբաց Պերլլամ և Մոնդէֆիք վիճակներէն : 200,000 քիլոկրամ ընտիր գոթոր Սիւլէյմանիէ, Ռէվանտորգ և Քուհի գաւառաց : Այս բերքերն 'ի Մօսկայ կիջնան լաստերով : 'ի Պաղտատ կը բերուին նաև քրքում, գազի խէժ, և տեղոյն մօտերէն քաղաւած չոր պտուղք : Կ'երևի նաև քիչ մը բամբակ, երկուց գետոց միջոցը մշակուած . բայց կը գործածուի խոշոր հիւսուածոց համար, 'ի պէտս բնակչաց երկրին :

Այս նահանգին կլիմային տարբութիւնն կը ներէ մեաքսի բոժոժից դարմանն ալ՝ բաց օդու մէջ . որով Պաղտատու վաճառք մ'ալ կը հայթհայթի . բայց յամին 1872 չյաջողեցաւ բերքն և Պարսկաստանի մետաքսն աւելի Տրապիզոնի ճամբան կը բռնէ : Իրագի բազմաթիւ Արաբացի ցեղը շատ անասուն կը դարմանեն, բայց երկիրն այնքան ընդարձակ է և բնակիչքն այնքան քիչ՝ որ տանապատիկ աւելի շատ կենդանիներ կրնային դարմանել . բուրդ, մորթ և կաշի այնպէս առատ են հօն ինչպէս 'ի Տիարպէքի : Աժոտիքաւի կոյուած գառանց մորթերն՝ Հայէպի ճամբով 'ի Ռուսաստան կը զրկուին . յամին 1870 խաւրուեցան 70,000 կրտոր, հատն մէկ Քրանգի, միջին հաշուով . փորձի համար նոյն տարին 1000 հատ ալ զրկուեցաւ 'ի Մարսիլիա :

Քաւքասն որ այս տարին նախ չի մշակուիր, կրնար շատ առատ և գեղեցիկ հունձք ընծայել Մծբնայ դաշտաց մէջ : — Գոմից մորթերն, իբրև 9500 հատ 'ի Պաղտատ կը զրկուին :

Քոլորն մէկէն Տիարպէքի նահանգն հինգ միլիոն Քրանգի վաճառք կը խաւրէ զուր, որոց 2 միլիոնն, ըսինք, բուրդն է . երեք միլիոն վաճառք ալ դրանք կ'ընդունի, որոց երկու միլիոնն հիւսուածք են : Քիւրտիստանէն այժու մորթիք ալ կը բերուին, որոց 200 հակ (բեռ) յամին 1873 զրկուեցաւ 'ի Մարսիլիա, 200 ալ 'ի Կ.Պոլիս :

Միջագետք ոչ վաճառականութեան կողմանէ և ոչ ալ քաղաքականութեան յատուկ կերպարանք մը չունի . Մօսկոյ Տիարպէքիէն աւելի կախումն ունի 'ի Պաղտատայ . և բոլոր նահանգին մէջ մասնաւոր ճարտարութեան բան մը չկայ, բաց 'ի Մօսկայ մէջ մնացեալ քիչ արուեստներէն : Վաճառականական առևտուրն հօն տանն միլիոն Քրանգի կը հասնի . արտահան և ներքաարք վաճառքն զրեթէ հաւասարաչափ են : Երկրին բերքերն են ասոր, մորթիք, գոթոր, և այլն : Ասրն աւելի դէպ 'ի Մէրտին կը խաւրուի, որ աւելի մօտ է

Հայկայ քան Մօսկայ : Դէպ 'ի Մօսկ կու գան բեռնարարձ լաստք, որոց փայտեղէն կազմածն՝ Պաղտատայ տանց շինութեան կը գործածուի :

Գանք յիրագ Արապի . գետոց հոսանքն և Ասորուց անապատին վտանգն ներն՝ դէպ 'ի հօս կիջեցընեն Տիարպէքի և Միջագետաց բուրդն ու կաշին . եւրոպական վաճառք ալ՝ ճամբուն ապահովութեանն համար՝ ծովով կու գան և վաճառքին կը թափեն 'ի Պաղտատ, ուսկից կը սփռուի բոլոր գետա, հովտին մէջ : Ենչի իսկ Պաղտատ ալ կը մատակարարէ մեծ մաս մը վաճառուց . 3 կամ 4000 տակառ արմաւ պտուղ, 1500 տակառ ասոր, որոյ ամենէն բարակ տեսակն կու գայ Արաբաց Պերլլամ և Մոնդէֆիք վիճակներէն : 200,000 քիլոկրամ ընտիր գոթոր Սիւլէյմանիէ, Ռէվանտորգ և Քուհի գաւառաց : Այս բերքերն 'ի Մօսկայ կիջնան լաստերով : 'ի Պաղտատ կը բերուին նաև քրքում, գազի խէժ, և տեղոյն մօտերէն քաղաւած չոր պտուղք : Կ'երևի նաև քիչ մը բամբակ, երկուց գետոց միջոցը մշակուած . բայց կը գործածուի խոշոր հիւսուածոց համար, 'ի պէտս բնակչաց երկրին :

Այս նահանգին կլիմային տարբութիւնն կը ներէ մեաքսի բոժոժից դարմանն ալ՝ բաց օդու մէջ . որով Պաղտատու վաճառք մ'ալ կը հայթհայթի . բայց յամին 1872 չյաջողեցաւ բերքն և Պարսկաստանի մետաքսն աւելի Տրապիզոնի ճամբան կը բռնէ : Իրագի բազմաթիւ Արաբացի ցեղը շատ անասուն կը դարմանեն, բայց երկիրն այնքան ընդարձակ է և բնակիչքն այնքան քիչ՝ որ տանապատիկ աւելի շատ կենդանիներ կրնային դարմանել . բուրդ, մորթ և կաշի այնպէս առատ են հօն ինչպէս 'ի Տիարպէքի : Աժոտիքաւի կոյուած գառանց մորթերն՝ Հայէպի ճամբով 'ի Ռուսաստան կը զրկուին . յամին 1870 խաւրուեցան 70,000 կրտոր, հատն մէկ Քրանգի, միջին հաշուով . փորձի համար նոյն տարին 1000 հատ ալ զրկուեցաւ 'ի Մարսիլիա :

Այս նահանգիս մէջ առատ է խէժն ալ. բայց յամին 1870 բերքն չյաջողեցաւ. միայն 100 մնտուկ դուրս զրկուեցաւ 100ական քիւրկրամ:

Պաղտատի վիճակին մէջ Աէկլաշի բուռած ձիոց ցեղ մ'ալ կը դարմանուի, որ մեծ համբաւ ունի յեգիպտոս և 'ի Հնդկիս. բայց տէրութիւնն վախճալով անոնց նուազելուն, յամին 1873 արգիլեց եօթն տարուան համար անոնց արտահանութիւնը, թէ և լուեխայն դեռ կը զրկեն, բայց քիչ թուով:

Ըսածնեբնէս երևի որ արտահանութեան նիւթերն բաւական առատ են, և հանենն ալ դիւրին է. և կրնայ անհամեմատ կերպով աւելի շատնալ, ուրով և դրսէն աւելի վաճառք ներս մտցընել, ինչպէս որ արդէն աւելնալու վրայ է այս. 1866-7 թուականին Պաղտատու մարաստունն իբր 22 միլիոն զուրուշի ներքսարեր վաճառք նշանակած է, որոց 18 միլիոնն Պարսկաստանի համար. անկէ ետև երթալով աւելցեր է գումարն. 1870-1 թուականին եղած 31,383,000 զուռուշ, որոց 11 միլիոնն միայն Պարսից բաժին, իսկ Եւրոպեացւոցն 20 միլիոն, հանդերձ Անգղիական Հնդկաստանի արտահանութեամբ, որ յաջորդ տարին, 1872, աւելի եղած է քան զ21 միլիոն (5,520,000 ֆր.) Այս գումարիս 3,900,000 ֆրանգն է ձեռագործաց համար, 570,000 երկաթի ձողից, չաքարի, չուխայից, ճրագուի, որդան կարմրոյ, և այլն: Իսկ 'ի 1874-5 ներքսարերութիւնն հասաւ 48,151,647 զուռուշի:

Ամենէն աւելի փնտուռած նիւթն է բամբակեղէն հիւսուածքն, մանաւանդ ամենէն հասարակ և արժան ու գոյնզգոյն տեսակն. յայսմ մասին յայտնի է որ Անգղիոյ գործարանք կը գերազանցեն. ամեն տարի 200,000 կտոր հրնդկակտաւ կը մըտնէ, 450,000 մառաւրոյաւ քանձիպ. կտորն կ'արժէ 34-38 ֆունգ: Նոյնպէս յԱնգղիոյ կու գան պղինձ և գործուած ու անգործ երկաթ. — փռանկաստան կը խաւրէ հնդկակտաւ, չուխայ, բրդեղէն հիւսուածք,

մետաքսեղէն, չաքար, նորելուկ նիւթեր և որդան կարմիր. ասոնք ամենն ալ շահարեր են, բայց շատ չեն գործածուիր, միայն թուղթն և երկաթ մեծաքանակ կը վաճառուին:

Պաղտատ Պարսկային ծոցոյ միջոցով կ'ընդունի 'ի Հնդկաց' գաֆէ, համեմունք, կերպասեղէն և քիչ մը մետաքս. Պարսկաստան' որ դիմացելուն և աղէկ լաթեր կը զրկէ՝ Եւրոպիոյ հետ յաջողութեամբ կը մրցի. տարուէ տարի 3 միլիոն քիւրայ ալ քուսպէքի կը խաւրէ նարկիլէի համար. 33,000 ալ կապերտ մեծ ու պզտիկ. Եւրոպիոյ վաճառքն կը սփռուին բոլոր գետահովտին գաւառաց մէջ, և 'ի Պարսկաստան, մինչև 'ի Համատան, Սպահան և Շիրազ: Պարսկաստան Եւրոպայէն աւելի առուտուր ունի Եփրատայ գետահովտին մէջ. թէ և վերջի տարիներս նուազած էր այս առուտուր, բայց նորէն անելու վրայ է. 1871ին ստակալի սոմլ մեծ ֆրաս տուաւ իրեն. անկէ առաջ 1866-7ին բոլոր ներքսարեր վաճառուց 6/7 մասն իրենն էր. 1870-1ին, միայն 11 միլիոնի վաճառք մտուց: Այն պատճառաւն է որ Եւրոպացւոց վաճառքն աւելի սկսան ներս գալ: Բայց զարձեալ Պարսիկք աւելի մեծագոյն մաս կ'առնուն անգղիական և փռանկական վաճառուց: Պարսկային ֆրդաստանն, լօրիստան և Սպահան իսկ իրենց պէտք եղած եւրոպական վաճառքն կ'առնուն 'ի Պաղտատ. Գըրմանիս, Շիրազ և Համատանն են Պաղտատն ու Պարսան Պարսից գլխաւոր շահաստան ընողք. ասկէց կ'երևի որ թուրքիս որչափ ալ յետամնաց է՝ դեռ գերազոյն է քան զՊարսից տէրութիւնն: — Վաճառականութեան շահուց թիւը գրելու է և Շիի Պարսից ուխտագնացութիւնն՝ Ալիներուն գերեզմանաց: — Պաղտատն 'ի Դէհրան անգղիացի սուրհանդակ մը կ'երթայ, ոտքով, 40 օրուան մէջ:

Պաղտատ Արարիոյ նաւահանգստից հետ ալ յարարերութիւն ունի, մանաւանդ Մաչկաղի հետ, և Ռուսաց հետ. բայց առուտուրն մեծ բան մը չէ: Այս

իրագայ մայրաքաղաքն իր բարգաւա-  
ճանաց ատեն մեծ ճարտարութիւն  
մ'ունէր, որոյ դեռ մնացորդն կայ . ի-  
բրև 26,000 բամբակեղէն կամ մետաք-  
սեղէն ֆոշ կը շինէ, 24,000 մետաքսէ  
գօտի, 50,000 բամբակէ բարակ հիւ-  
սուած (percale), 115,000 կտոր բամ-  
բակեղէն լաթ, բրդէ կամ ուղտու մազէ  
վերարկու, կօշիկ, և ղէնք . Բայց սա-  
կայն այս ամենն ալ բաւական չեն եւ-  
րոպական վաճառուց հետ մրցելու, թէ  
և իրենց գործածութիւնն տարածուած  
է բոլոր գետահովտիս մէջ և ՚ի Պարս-  
կաստան :

Բայց որչափ ալ որ բարգաւաճ ըլլայ  
Պաղտատու առուտորն՝ դեռ ոչինչ է  
կարելոյն քով. գլխաւոր արգելք զար-  
գացման այս զարմանալի երկրին, որ  
կըրնար միլիոնաւոր բնակիչ դարմանել,  
փոխանակ ամեն մէկ քառակողմի քի-  
լոմեղրի վրայ 8 կամ 9 հոգի ունենա-  
լու, ճամբաներու վտանգն է. երկրին  
գլխաւոր պահանջն է՝ տեղափոխու-  
թեան հնարքն, և ինչուան որ այս բանս  
չապահովի՝ ապագայի յոյան շատ կը  
նուաղի. Ամենէն շուտ հաղորդակցու-  
թեան ճամբաներն հիմայ կամ գոցուած  
են կամ վտանգաւոր . ամենէն ուղղակի  
ճամբան Եփրատայ և Միջերկրականի  
միջոց, որ է ընդ Հիդ. և Գասամր՝ հազու  
կը բանի . Ասորուց անապատին Պէտէ-  
ւիք հօն բռնացած են . և շատ հեղ ա-  
նոնց դէմ զրկուած զօրքն օգուտ մը  
չբրին . այս ճամբով Պաղտատէն ՚ի Հա-  
լէպ 30 օրուան մէջ կարելի էր երթալ-  
իսկ կարաւանք՝ որ կանոնաւոր կերպով  
այս քաղաքներէս ու Մօսկէն և Գամաս-  
կոսէն կ'երթան կու գան, 15 օր աւելի  
կ'ուզեն, վասն զի գետոց եզերքէն չեն  
կըրնար հեռանալ . ՚ի վերայ այսր ամե-  
նայնի դարձեալ կը ստիպուին անցից  
համար ընծաներ տալ ցեղապետաց .  
Ուրեմն եւրոպական վաճառուց ներք-  
սարերութիւնն միայն ջրի ճամբով կ'ըլ-  
լայ . Պաղտատու վերջին կուսակալնե-  
րէն մէկն, Միտղատ փաշայն (որ աւելի  
անուանի եղաւ Օսմանեանց յետին քա-  
ղաքական անցից պատճառաւ) լաւ ի-

մացեր էր նաւարկութեան կարեւորու-  
թիւնն՝ ցամաքի ճանապարհաց անա-  
պահովութենէն . Եփրատայ ջրոց առա-  
տուլթեան ատեն՝ փորձեց անդրիացի  
չոզենաւեր՝ դէպ ՚ի Հալէպ վեր հանել .  
բայց գետոյն հանգամանքն չյաջողե-  
ցին : Այն ատեն փռանկ ընկերութիւն  
մը առաջարկեց Տիգրիս գետը փոր-  
ձել, որ աւելի քիչ արգելք ունի, և ա-  
ւելի յուսալի է . բայց դեռ գործն չկա-  
տարեցաւ : Աւելի յաջող եղաւ Եփրա-  
տէն դէպ ՚ի վար իջնելն . Պաղտատայ և  
Պասարայի հետ կանոնաւոր հաղորդա-  
կցութիւն կայ անգրիացի և թուրք շո-  
ղենաւոր . այս ճամբով միայն կ'ըլլայ օ-  
տարական վաճառականութիւնն, և ծո-  
վային նաւարկութեան ալ շարժում մը  
կը պատճառէ : 1869ին 39 չոզենաւք,  
որոց 36 անգրիացի էին, 25,000 տա-  
կառայով բեռամբք մտան ՚ի Պասար,  
ուր 1400 առագաստաւորք ալ եկան  
30,578 տակառաչափով . 1870ին 952  
նաւք եկան 557,000 տակառաչափ բե-  
ռամբք, անկէ ետեւ ալ աւելի : Նաւուց  
մեծ մասն Անգլիացուց են, և Պոմպայի  
ու Լիվըրբուլի գծին վրայ՝ դադար կ'առ-  
նուն ՚ի Պասար : Եւ թէպէտ գետոյն  
բերանն վտանգաւոր եղած է աւազոյ  
կուտակութեամբ, բայց դեռ ապահո-  
վագոյն ճամբան է . և երկու ապահո-  
վական ընկերութիւնք (որոց մէկն  
փռանկ է), կ'երաշխաւորեն Պաղտատի  
և Պասարայի միջոց վտանգաց դէմ : Ան-  
գրիացի չոզենաւք ամեն 15 օր կը դա-  
դրին ՚ի Պասար . 1873էն ՚ի վեր ամեն  
ամիս Լոնտրայի և Պոմպայի համար  
նաւ կը մեկնի . որ կանգ կ'առնու նաև  
՚ի Քարաչի և ուրիշ հանգրուաններ՝  
Պասարայէն մինչև ՚ի ծով :

Թէպէտ և կանոնաւոր է այս հաղոր-  
դակցութիւնն՝ բայց վաճառականու-  
թիւնն աւելի ուղղակի ճամբայ կ'ուզէ .  
ներքսարերութեան համար կարելի է  
օգտակար ընել հիմկու կարաւաննե-  
րը, և Արաբիոյ եզերաց երկայն շրջա-  
պատէն ազատիլ . փռանկ վաճառակա-  
նաց համար այս առթիւս պէտք է Պէ-  
րուլթի ճամբան բռնել, Պէրուլթէն ՚ի

Դամասկոս ամենէն սուղ ծախքն կ'ըլլայ 20 Ֆրանգ 200 օրգայի (256 քիլոկր.) համար. անկէ ինչուան 'ի Պաղտատ բաւական կ'ըլլայ 50 Ֆր. ըսել է իբր 30 Ֆրանգ 100 քիլոկրամի համար : Բովանդակենք խօսքերնիս : Պաղտատ հիմայ կ'ընդունի տարին 12 միլիոնէ աւելի վաճառք, ամենէն շատն բամբակեղէն խոշոր հիւսուածք գոյնզգոյն և արժան գնով : Եւրոպայէն կ'ուզի ևս չափար, մետաղեայ գործուածք, որ դան կարմիր, պղինձ, ճրագ, բրդեղէն

հիւսուածք և չուխայ : Բուրդն, ռծտէրխասն ըսուած գառանց մորթն, գոթորն ու մետաքս, ատենօք նաև բամբակն (որոյ համար այս տեղէն աւելի յարմար գետին չկայ), արտահանութեան պատուական նիւթեր են Եւրոպիոյ համար : Գետոց լրի ճամբաներ և անգղիա — հնդիկ երկաթուղին՝ երբ 'ի գործ դրուին՝ կը խոստանան քիչ ատենէն այս գեղեցիկ երկիրներու մեծ բարգաւաճանք մը, ուսկից Եւրոպիոյ ալ ոչ սակաւ շահ կ'ըլլայ :

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՕՐԷՆՔ ՄԸ

Հարբած մարդու մը տուած որ և իցէ փնտտուն պատասխանատու համարել գինեվաճառք կամ օրեվաճառն, իբրև խիստ կանոն մը կը կարծուի, սակայն այս սկզբունքն օրէնք եղած է Ամերիկայի նահանգաց շատերուն մէջ :

Ըստ այսմ օրինաց, որովհետև ողբից ըմպելիք վաճառողը վաստակ ունի, անոր համար իբրևազի է որ հատուցանէ ֆիսքը. վասն զի այն ֆիսքսուց ուղղակի պատճառն ինքն եղած է այնպիսի հեղանիւթ վաճառելով, և իր գործակցութեամբ առաջ եկած անբարեխառնութենէն ֆիսքս կրող անձինք իբրևունք ունին դատ բանալու : Այս փորձն հասարակային ընդունելութիւն գտաւ Ամերիկայի մէջ. և վերոյիշեալ օրէնքը քանի մը բարեփոխութեամբ շուտ մը մուտք գտաւ ուրիշ նահանգաց մէջ ալ. և դատարանաց տարեգրութիւններուն մէջ դրոյմուած բազմաթիւ վճիռները ապացոյց են որ այն օրէնքն ազդու եղեր է :

Կիւ-Եօսթի նահանգին մէջ տիրող օրէնքն այսպէս կ'ըսէ . « Ամենայն այր, « կին, որդի, ազգական, պահապան, « խանութպան, կամ օր և իցէ ուրիշ « մէկն որ ֆիսքս կրեր է անձին, ստա-

« ցուածոց, կամ ապրուստի միջոցնե, « բուն, հարբած մարդէ մը, սովորաւ, « կան հարբածութեանը պատճառաւ « կամ այլապէս որ և իցէ մէկէ մը, իրաւ, « աւուք պիտի ունենայ դատ վարելու « ընդդէմ անոր, որ վաճառելով կամ « հայթայթելով ողբից ըմպելիք՝ պատ, « ճառ եղեր է կատարեալ կամ մասնաւ, « կան հարբածութեան մէկ կամ շատ « անձանց » :

Ուրիշ նահանգաց մէջ եղած օրինաց համապատասխան լեզուն շատ կը տարբերի, ինչպէս նաև յաճախ կը տարբերին առժամանակեայ կանոնադրութիւններն. բայց գոյացութիւնը միշտ նոյն է. սակայն այս կարևոր զանազանութիւնը կայ որ մեծաւ մասամբ այն նահանգներն որոնց մէջ ընդունելի եղած է ֆիսքսուց հատուցման օրէնքը, ամենևին յիշատակութիւն չըլլուի թէ արդեօք օրինաւոր է թէ ապօրինաւոր վաճառումն ողբից ըմպելեաց : Օղբվաճառք կրնայ հրամանագիր առած ըլլալ, և կատարած ըլլալ այն ամեն պայմանն զոր կը պահանջէ օրէնքն այն չափով վաճառելու, ինչ չափով որ թոյլ կուտայ. և սակայն պատասխանատու կ'ըլլայ թէ որ խմողն հարբի և ֆիսքս տայ :